

Աղբավայր Կոտայքի մարզում

2011 թվականի հունիսի 21-ին ՀՀ Կոտայքի մարզպետարանում ՀՀ քաղաքաշինության նախարարությունը Վերակառուցման եւ Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) աջակցությամբ «Կոշտ թափոնների կառավարման եւ տարածաշրջանային աղբավայրի կառուցման ծրագրի»>> շրջանակում կազմակերպել է աշխատանքային հանդիպում:



Հանդիպմանը մասնակցել են ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ Ավագ Հակոբյանը եւ Վերակառուցման եւ Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) -ի ներկայացուցիչ Լեւան Շարվաձեն:

COWI A/S դանիական խորհրդատվական ընկերության ներկայացուցիչները ներկայացրել են ծրագրի իրականացման գրասենյակի ու շահագործող կազմակերպության ստեղծման եւ աղբավայրի շինարարության վերաբերյալ առաջարկությունները:

ՎԶԵԲ-ի ներկայացուցիչ Լեւան Շարվաձեն տեղեկացրել է, որ ծրագրի ուսումնասիրության փուլը նախատեսված է ավարտել 2011 թվականի սեպտեմբերին: Դրական արդյունքների դեպքում ՎԶԵԲ-ն կընդունի որոշում Հրազդանում տարածաշրջանային աղբավայրի նախագծման եւ կառուցման, Կոտայքի մարզում աղբահանության եւ կոշտ թափոնների կառավարման համակարգի ստեղծման ծրագիրն իրականացնելու մասին: